



կամ նա ինքն իրեն այս ու այն կողմ կը վազէ անդամներ արձանագրելու, մինչդեռ անդին իր պաշտօնը երեսի վրայ ձգուած է . . . :

Այն ատենները առաջնորդարանը իր ծրագրած աղքատախնամը կազմեց . իսկ միւս ժողովրդական ձեռնարկը, որովհետեւ իր մրցակիցներն ունեցաւ, թէև ժամանակ մը օգտակարապէս շարունակեց, բայց հետո՛ւ հետէ ինքը իր սեղը լուծուեցաւ և միայն վարչական մարմինները կ'ապրին հիմակ, որք են Վսեմ . Մկրտիչ Պէյ Մարկոսօֆ և Տեարք Փան Պրուսալի . Առաքել Մ . Պէրպէրեան . Տիգրան Եպիփանեան . Տօքթ . Յակոբեան ևն .


Զմոռնանք ըսել թէ վերոյիշեալ անձերու կազմած ընկերութեան դադարումէն երեք օր յետոյ, առաջնորդարանն ալ իր աղքատախնամը դադարեցուց և այդ վարչարումէն 4-5 օր վերջն էր, առաջնորդարանի նազարէթը մէկ քանիներու կը պարծենար տեսակ մը . . . ուրախութեան ժպիտով, « ո՛վ որ ինձի հետ չ'գործեմ » չ'կրնար յաշոյղիլ, քանի որ Գաղաքական Ժողովը իմ ձեռքիս մէջն է . ես այս խօսքերը, կը յաւելուր, քանիցս ողորմած հոգի Լեոն Գէրէսիմէճեանին ալ ըսած եմ . . . » :

Ահաւասիկ թիւ մէկ օրինակը, որով ընթերցողները կառօն յոնուշուր չենք հրաւիրեր —ինչպէս Գաղաքական վարժարանի լիազօր Տեսուչ համալսարանական քահանան կ'ընէ ամեն անգամ, երբ իր մանկավարժական (?) դասերը կուտայ — սակայն կը փոփոխուի որ ներկայ թիւ մէկ օրինակը լաւ մը ուշադրութեան առնելէ վերջ, սպասեն անոնց յաշոյղներուն, որոնք բաւարար ապացոյցներ պիտի ըլլան, մեր 151րդ համարի շարունակելի յօդուածը եզրակացնելու ատեն .

(Շարունակելի) Ե .

### ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ

Շարունակութիւնը «Արշալոյս» ի բարեկամ Պատ . Ռ . Յ . Գնահանի, զոր արտասանած էր հանգուցեալ Պ . Սեդրաք Եսագուպեան, 27 ամեայ երիտասարդին դազալին վրայ .



Գիտութիւնն ալ նոյն պատասխանը կուտայ : Անոր երկար դարերէ ի վեր անխոնջ խնամարկութեանց արդիւնքը սա եղած է . տիեզերքին մէջ իրական կորուստ չկայ . Մեր կորուստ կոչածը միայն տեսական է . ոչ մի հիւլէ տիեզերքին մէջ կարելի է ոչնչացնել, անէացնել, նշո՛ւմն որ մենք իբր կորուստ կը նկատենք ուրիշ բան չէ այլ արտաքին ձեւի կերպարանափոխութիւն . Ինչու՞ ուրեմն այս օրինաց կիրարկութիւնը մերժենք գոյութեան մի կարևոր մասին : Եթէ նիւթական գոյութեան մէջ իրական կորուստ չկայ, նոյնը նաև պէտք է ճշմարիտ ըլլայ աննիւթական, վերացական : հոգեկան գոյութեան նկատմամբ : Եթէ այս մեր առջեւը տարածուած անկենդան զանգուածին մէջ իրական կորուստ չկայ, կ'ըսէ գիտութիւնը — թէ անոր ամէն մասին մէջ գտնուած հիւլէները թէև իրմէ բաժնուած են սակայն անէացած չեն — ինչպէս կարելի է ընդունիլ թէ մի քանի ժամ առաջ գոյութիւն ունեցած հոգեկան եւ մտաւորական կարողութիւնները անէացած են : Սակայն մենք անոր մօտէն հըսկողներս գիտենք որ մինչ անիկայ օրըստօրէ կը հիւլէք եւ կը մաշէք անոր մտաւորական կարողութիւնները կատարելով էին — միայն մի քանի րոպէի մէջ անհրեւութեացան : Ուստի տրա-


մաբնութիւն և բանականութիւն կը պահանջեն որ ընդունինք թէ քանի որ անոր նիւթական մասին մէջ կորուստ չկայ չկրնար ըլլալ նաև որևէ կորուստ անոր հոգեկան գոյութեան մէջ :

Սակայն Յայտնութեան տուած պատասխանը աւելի բացայայտ է : Թէև սրբազան հեղինակներէն ոմանք իրենց տխուր րոպէներուն մէջ յոռետեսութեան եւ միլիտանտիստութեան զգացումներուն տակ սկեպտիկեան ակնարկութիւններ նետեցին չիրիմէն անդին գտնուած վիճակին վրայ, բայց հոն միշտ այս մասին վստահութիւն մը կը գտնուի : Պօղոս Առաքեալ կ'ըսէ . « Վասնզի պարտ է այս ապականացուին զգենուլ անապականութիւնն եւ այս մասնականութիւնն զգենուլ անմահութիւնն » : Ծիշդ նոյն վրձնը զոր գիտութիւնը դարեր վերջը արձակած է : Ո՛չ, կորուստ չէ այս, այլ ակնկարգութիւն, ձեւի եւ կազմի փոփոխութիւն :

Պր . Սեդրաք Եսագուպեան մեզի ամենուս ծանօթ է : Շնորհակալ ենք անոր մեզի ստրկեցուցած դասէն : Սրդարեւ Յոսեան էր այն համբերութիւնը որով սարաւ գրեթէ մէկ ու կէս տարի այն սոսկալի հիւանդութիւնը : Անոր նաչը խիտ ծանր էր եւ վեհանձնաբար տարաւ զայն : Անոր տուած յաճախակի այցելութիւններու մէջ ինքնիրեն կը հարցընէի, արդեօք ես պիտի կրնամ տանիլ այս նաչը՞ եթէ ինձ վիճակէր այն : Շատ քիչ անգամ, որչափ որ կը յիշենք, միայն մէկ անգամ գանգատեցաւ իր վիճակէն : Մինչև վերջին շունչը Տէրօջը փառք աւուր վախճանեցաւ : Օրհնեալ ես դու, ո՛վ վերացեալ հոգի, որովհետեւ իրագործուեցաւ քեզի համար այն խոստումնքը թէ՛ « Հաւատարիմ եղիք մինչև ի մահ, եւ պիտի տամ քեզ կենաց պսակը » :

Ուրեմն երկինքէն Աստուածային միւթարութիւն կը հայցենք անոր հօրը, մօրը, քոյրերուն, օտար երկիր գտնուող եղբորը, հօրեղբայրներուն, հօրեղբորորդիներուն, քեռայրերուն, բոլոր ազգականաց ու պարագաներուն : Աստուած օրհնէ այս գերդաստանը : Ամէն :

### ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ



Առ Հայ Մեղոյ

(Շարն . նախորդ թիւն եւ վերջ)

Մտադրեալէն շատեր երբէք չ'են ստովիլ ինչ որ գիտնալ պարտին : Իրենք իրենց զգուշութիւն չ'են ընել, եւ առիթ կ'ընծային սատանային, որ օգտուելով անոնց տկարութեանէ՛ն՝ կ'աղղէ գտնուալէս կեանքերուն վրայ : Լծակցական կենցաղը՝ բռնաբարու զգացմամբ սրեւ է ծայրայեղ զեղխութեան չ'մղելուամ ար, Աստուծոյ կողմէն եղած պահանջին ուշադրութիւն ընծայող չ'կայ : Քիչեր կը հասկնան թէ կրնանակն սրբազան պարտականութիւն մ'է այս, եւ ոչ կըրից հնազանդութիւն : Աւելի ամուսնութեան շարժումներն եղող նպատակին կը հետևին, եւ կ'երեւակային թէ ամուսնութիւնը մարմնական տոփանաց մէջ թաթաւուելու իշխանութիւն կ'ընձեռէ : Նոյն իսկ երկու սեռէն ինքզինքնին բարեպաշտ ձեւացնող անձինք, չսփազանցօրէն անձնատուր եղած են իրենց լիտի ցանկութիւններուն, առանց ըմբռնելու թէ Աստուած զերենք պատասխանատու կը նկատէ կենսական գորութեան շքացման համար, որ կը ձկալի կարծել կեանքը, եւ չլստել Չղային դրութիւնը : Ի մի բան՝ ամուսնութիւնը ամենէն սեւ մեղքերը կ'սքօղէ : Երբ այրերն ու կիները առաքինութիւն կեղծելով՝ ի ծածուկ կը հետամտին իրենց ապականած հրայրքներուն, անբանեղէն աւելի նուաստացած կ'ըլլան : Աստուծոյ պարգեւած գորութիւնները ի դուր կ'սպառեն, զոր մեծայարգ ու նուիրական նպատակի մը վերապահելու էին : Կրից գոհելի սեղանին վրայ կը զոհուին առողջութիւնն ու կեանքը, եւ ազնիւ ու վսեմ ըղձանքները երկրաբար ճակամիտութեան կ'ենթարկուին : Ստոյգ է թէ՛ այս կերպով իրենց անձին նկատմամբ անհոգ գտնուողները,

իրենց ընթացքին տխուր հետեւութեան վրայով պաղապար մը չ'են կազմեր : Եթէ բուն իրենց յանցանքով անձեռնուկ պատճառած տուայտանքը ու կսկիծը ըմբռնէին, սասակի պիտի խնայէին, եւ մանաւանդ ոմանք պիտի հեռանային մեղքի ասպարէզէն, որուն հետեւանքները քանի՞ առեւել են : Շատերուն համար այնչափ խղճալի է գոյութիւնը, որ մահը նախամեծար պիտի համարուէր կեանքէն . եւ կան ալ՝ որ իրենց կեանքը գրաստական մոլու թիւններու չափազանցութեանց խայտառակաբար զոհելէն, տարածամ կը մեռնեն, ինչու որ ամուսնացած ըլլալով, այլևս ո՛ր է չարիք չկայ կը կարծեն անհարկի ծայրայեղութեանց մէջ :

Այրե՛ր ու կիներ՛, օր մը անչուշտ պիտի հասկնաք թէ ինչ է անժողովարութիւնը, եւ ինչի՞ կը յանգի : Անարգ բնաստութեան կըրքերը որքան դուրսը՝ նոյնքան ալ անբարեբաղ կարծուած ամուսնական շարկերուն ներքեւ կը յայտնուին : առաքեալը կը յորդորէ ամուսնիները սիրել իրենց կիները « ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին ու իր անձը մասնեց անոր համար : Նոյնպէս ալ պէտք է որ էրկինքը իրենց կիները սիրեն իրենց մարմիններուն պէս : Ան որ իր կիները կը սիրէ՛ իր անձը կը սիրէ : Վասնզի մէկը բնաւ իր անձը չ'ատեր, հապա կը սնուցանէ ու կը խնամէ զանիկայ, ինչպէս Տէրն ալ եկեղեցին » :

Անարատ սէրը երբէք ամուսինը չ'մղեր իր կիրքը յագեցնելու գործիք մը դարձնել կիներ, ցանկացածը վայելիլ ճշմիլը անասնական հըրայրք մ'է : Առաքեալին նկատաբար եղանակով իրենց սիրայքն արտայայտող մարդիկ հազուագիւտ են, « ինչպէս Քրիստոս, որ սիրեց եկեղեցին, եւ իր անձը մատնեց անոր համար, ( ոչ թէ պղծելու, այլ ) սրբելու եւ մաքրելու, որ իր զիմացը սուրբ ու անարատ կեցնէ զայն » :

Ահաւասիկ ամուսնութեան մէջ Աստուծոյ հասկցած ու պահանջած սէրը : Այդ գորովալիք զգացումը մաքուր ու սուրբ սկզբունք մ'է . սակայն, զգայալան հեշտութիւնը ո՛ր է խոնձմութիւն չ'ընդունիր, եւ իմացականութեամբ կառավարուել չ'ուզեր : Յառաջ գալիք հետեւանքներուն մասին բոլորովին կոյր է, եւ չ'սխորժիր կանգ առնուլ պատճառն ու արգասիքը քըններու : Շատ կիներ վատուածութեամբ ու մնալուն հիւանդութիւններով կը տանջուին ու կը տապկուին, իրենց էութեան օրինաց անարգուելուն աղաղաւ :

Բնութեան օրէնքները սպասուպու առաթուր եղած են : Այրերուն ու կիներուն զգայուն գործարանաց անբնական շարժմամբն յառաջ եկող բորբոքուն գրգռականութեան հետեւանք, մտաց կորովի կարողութիւնները յիմարաբար փճացուցուած են : Սիրոյ բնական վէտվէտումները շարաշար գործածել, եւ այս կերպով հըրաբուած խոտան կիրքերն յագեցնել, ներկի կը նկատուին վերջնաշարժիկ սերունդէն, որ այս սոսկալի թխար ճիւղը, անարգ ու ցած ցանկութիւնը, փափկասիրութիւն կը կոչէ անամօթ քմծիճաղով մը . . . :

Հեղինակ ՏԻԿ . Ե . Կ . ՀՈՒԱՅԹ Ազատ Թարգմ . Կ . Գ . ՈՒՂՈՒՆԵԱՆԻ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Վիեննա 15 Փետրուար . — Յրանտուա Ժօզէֆ կայսրը Միլան թագաւորին յուզարկաւորութեան հանդիսին ներկայ դրտնուած է :

Կ . Պոլիս 15 Փետրուար . — Ռուսական դեսպան Պ . Չէնովիէվ Սուլթանին յայտարարած է թէ՛ Չարը խիստ չէզոքութիւն մը պիտի բռնէ Մակեդոնացի ժողովրդեան մէկ ապստամբութեան և կամ Պուլկար դօմիթներուն խռովայոյզ փորձերու ատեն Թուրքիոյ ընելիք զինուորական միջամտութեան պարագային :

Փարիզ 15 Փետրուար . — Յունաց թագաւորը նախագահ Լուպէյի հետ երկար տեսակցութիւն մը ունեցաւ :

Սեւանիկ 18 Փետրուար .- Տէմիրի կիր- ճին մօտ Պուլկար տաղանիներ կռիւ մը ունեցան թուրք զինուորներուն հետ . Պուլ- կարները ետ քաշուեցան 2 մեռեալ և վի- բաւորեալ մը ձգելով թուրքերուն ձեռքը :

Կ . Պոլիս 18 Փետրուար .- Արարիոյ Օսմանեան բանակին վրայ 3000 հոգի ալ աւելցան , սակայն և այնպէս չէյիներու և Պէն Ռաշիտի զինուորներուն միջև տեղի ու- նեցած նոր կռիւներու լուրեր կը հասնին :

Կ . Պոլիս 18 Փետրուար .- Գերմանիոյ նաւարանին ներկայացուցիչը Բ . Իրան յայ- տարարած է թէ՛ դրամը ամբողջովին ըն- գունելէ յետոյ միայն ապադրուած յաժա- տորակները պիտի յանձնուին :

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Պ . ԱՆԱ- ԹՕԼ ՖՐԱՆՍ

Կիրակի , կէս օրէ վերջ ժամը 2 ին , որոշուած էր որ Հայ Պատգամաւորութիւնը պիտի ներկայանար Հայկական դատի ա- խոյեանին , Եզրիպտացի Հայութեան հա- մակրալից արտայայտութիւնը մատուցանե- լու :

Պատգամաւորութիւնը կը բաղկանար 6 անձերէ , որոց երկուքը նախաձեռնարկ Մասնախումբի անդամներէն էին . Տիարք Առաքել Մ . Պէրպէրեան և Արմենակ Փա- փազեան :

Մասնախումբի կողմէ հրաւիրեալներէն կային « Գուռլոյէ տիւ Նիւլի Տնօրէն-խրմ . բազիրը Պ . Ժ . Միւնիլէ և Տիարք Յով- հաննէս Սէթեան , Գառնիկ Սիրունեան և Առաքել Փափազեան :

Պատգամաւորութիւնը կուան Գօնթի- նանիտալի մէջ մէկ ժամու չափ սիրալիր ըն- դունելութիւն վայելած է Պ . Ա . Ֆրանսի կողմէ , և Տիարք Սեթեան , յանուն Եզրիպ- տացիական Հայ ժողովրդեան՝ ճառ մը ար- տասանած է :

Պ . Անաթօլ Ֆրանս Տիարք Ս . Սէթ- եանի ճառին պատասխանելու համար կէս ժամու չափ խօսած է , որոյ միջոցին շնորհակալիք յայտնած է իրեն ցոյց արը-

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ՉԵԱՆՑ ԹԱԳՈՒՀԻՆ

(Շարն . Լախոդ թիւն և վերջ)

Տիկին Տամպրէօն դուրսը վերցուց . դուռը բաց էր . սևին վրայ կեցած և Պ . Տամպրէօնի դրան հետը կախած լոյսին մէջտեղը Սիլվիա տը Նաիվս իր մուշտակը նետելով կ'երեւար « սըլ- բալի լերանց » ստալին արարին պէս . գոհար- ներով և թանկագին քարերով զարդարուած շքազգեստով :

Դերասանուհին երբէք չ'էր չարժէր . բառ մը իսկ չ'էր արտասանէր . բայց միայն զինքը ուզողին կը նայէր :

« Այո՛ , կ'ըսէր իւրովի . թո՛ղ իր երազը իրանայ . թո՛ղ ուրիմն իր փոքր հիւանդ գուրբը հանգստանայ իր սիրածը տեսնելով և թէ՛ այն ջերմը , այն սոսկալի ջերմը , թո՛ղ սրանայ զէ- պի այն սեւ երկրները , ուսկից եկած էր :

Տղան կը ժպտէր , Բիէն շատ հանգարտ դէմք մը ունէր և ճիծողելով իր զողողուն ձեռքերը երեւցողին կ'երկարէր :

Սիլվիա երկար ատեն այսպէս կեցաւ . յե-

ուած համակրանաց և Հայ ժողովրդեան կողմէ իրեն եղած նուէրին համար :

Պատգամաւորութիւնը բաժնուած է շատ լաւ տպաւորութեան մը տակ :

Տիարք Ս . Սէթեանի արտասանած ճա- ռին թարգմանութիւնը մեր յառաջիկայ թուով պիտի հրատարակենք :

#### ՎԱՐԳԱՆԱՆՑ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Արգէն ծանուցած էինք թէ՛ Տէտէ Պէնլեան մեծ պատրաստութիւններ տեսած է , և ի յիշատակ Վարդանանց՝ Շարս-Ապտ- իւլ-Ազիզի թատրոնին մէջ այս դիշեր ժամը 9 ին , պիտի ներկայացնէ Աւարայրի նահա- տակաց ողբերգութիւնը :

Տէտէ Պէնլեան կը յուսայ թէ՛ Գահր- ըբէնակ հայութիւնը վաղը առաւօտեան Վարդանանց հոգեհանգստի արարողութիւնը լսելէ առաջ , պատշաճ պիտի սեպէ կեն- դանի օրինակները տեսնել այն քաջերուն , որոնք իրենց ազգին սիրովը վառուած կեան- քերնին նուիրեցին Տղմուտի եզրաց վրայ և իրենց արեամբ ներկեցին Աւարայրի ըն- դարձակ դաշտը :

#### Ս Ո Ւ Տ Ա Ն

Սուտանցիները խնդ- կ'ըլլան ճալլոմֆա կոչուած տեսակ մը պարի համար : Սովո- րութիւն է որ խաղի ամէն մէկ դարձին՝ պարողներուն կը հրամայուեն գինովցուցիչ ըմպելի մը , որ մէրիսաա կը կոչուի : Այս օրերս պատահած է որ Սուտանեան 13 և 14րդ վաշտերու զինուորներուն կիները , իրենց այդ սիրական պարը կատարած մի- ջոցին , Սուտանցի մը մերժած է Սուտա- նուհիի մը հետ պարել . այս մերժումը կամաց կամաց ընդհանուր կուրի փոխուած է և նախատինքներէ ու հրմշտուքներէ յե- տոյ , սկսած են զիրար լաւ մը ձեծել : Արգէն ըմպելիքէն շատերուն զուրկը տուք- ցած ըլլալով , նապոյրներով և հրացաննե- րով կուրի վերջին ծայր սաստիկացուցած են :

6 Զինուոր սպաննուած և 24 ալ վիրա-ւորեալներ կան , որոց մեծ մասը 14րդ վաշտին կը պատկանին :

Երկու վաշտերուն հազարապետները 16րդ վաշտին հետ անմիջապէս կուռոյն վայրը փութալով , կուրի դադարեցուցած և

տոյ փոքր՝ բայց սպիտակ անկողնոյն մօտենա- լով կամաց մը Բիէնին կը խօսէր . տղան չէր պատասխաներ , որովհետեւ իր չափազանց ու- բախութենէն այլ յայլմէ եղած էր :

Անոր վրայ ծոնցաւ Սիլվիա , զայն իր գրկաց մէջ առաւ և իր աղամանդազարդ պահ- պանկնովը զուարճացուց զայն և տեսնելով որ ուզածը կարենալ գտնելէն ուրախ կը քնանար , շողողուն գոհարներէն մին անոր փոքր մասնե- րուն մէջ ձգեց , որպէսզի արթննալէ վերջ դար- ձեալ անոր հետ խաղայ :

Եւ կամաց մը ինչպէս որ եկած էր , այն- պէս ալ հետացաւ գնաց :

Այս տեսքը Տիկին Տամպրէօնի կրող մը կը թուէր :

Ամեն տարի միեւնոյն թուականին , կը տեսնուէր որ Արիէտլանտ փողոցին մէջ գրտ- նուած Սիլվիա տը Նաիվս պանդուկը կուգային երկու անձեր , երկուստաբար մը և կին մը , փոքր սղու մը ձեռքէն բռնած :

Բիէնի առողջութեան տարեդարձին օրն էր այդ . և ինչ որ ալ ըլլար , այս ուխտագնա- ցութիւնը չէր մոռցուէր :

Երախտագրութեան պարտք մ'էր այս , որ սակայն այս պարզ մարդոց և հոշակ հանած դերասանուհւոյն մէջ զօրաւոր կապ մը հաստա- տելու պատճառ եղած էր :

հետեւեալ օրը 14րդ . վաշտը Ուստի Մէ- տէնի զրկուած է :

#### ՆՈՐ ՀՐԱՏԱՄԱՆՈՒԹԻՒՆ

Նորակազմ Հրատարակչական Բնկիրու- թեան սեփականութիւնը եզրը Սահմանա- դրութեան տետրին Ա . պոսկը հրատարակ- ուած է և կը ծախուի կանխիկ բաժանոր- դագրուողներու համար 12 դահ . ողջ ի և պրակ առ պրակ 2 դահ . ողջ ի :

Գահիրէի շրջականներէն բաժանորդա- գրուիլ փափաքողները՝ ցնոր տնօրինութիւն կրնան « Արշալոյս » ի հասցէին դիմել :

#### ՏՕՔԹ ՔՕՐՆՖԷԼՏ

ՎԿԱՅԵԱԼ ՎԻԷՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէննայի գըլ- խաւոր հիւանդանոցներուն . Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց , Գաղղիա- կան ախտի , կոկորդի , քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 էն 12 , իսկ կէս օրէ վեր- ջը ժամը 3 էն 5 , իր տունը Եէփփի փա- շա փողոց , ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ :

« Բիւզանդիոն » Յունուար 30/12 Փետր . 1316րդ . թուոյն Ազգային բաժնին մէջ տեսնե- լով հետեւեալ գրութիւնը . և Եզրիպտացոց համար անոր շահեկանութիւնը ի նկատի ունե- նալով , նոյնութեամբ կ'արատապնէր :

Գահիրէէն կը գրեն մեզ . կ'ըսէ « Բիւ- զանդիոն » :

Այս օրերս Ազգ . Առաջնորդարանը ծանր տուգանք մը վճարելու դատապար- տուեցաւ տեղական դատարանի կողմէ . թէ և վերաքննութեան դիմած են , սակայն ձեռնհաս անձեր կ'յայտարարեն թէ դատը չահելու յոյս չկայ : — Սախտի մէջ գալու- ցին ունեցած բաւական ընդարձակութեամբ մէկ գետինը , ուր արմաւենի տնկուած է , բայտ սովորութեան վարձու կ'տրուէր : Ան- ցեալ տարի վարձակալութեան պայմանա- ժամը լրանալով՝ նախորդ վարձակալէն ետ կ'առնուի և աւելի բարձր վարձքով մը ու- րիշի մը կ'տրուի : Պայմանագրին մէջ նշա- նակուած էր թէ , 4000 արմաւենի կ'յանձ-

Սիլվիա տը Նաիվս , Բիէնի սէրը միշտ դէպի իրեն լարուած պահելու համար , իր սրահին մէջ խաղալիքներ շարած և ճաշարանին սե- դանին վրայ ամեն տեսակ շաքարիկէն ուսկիւր- ներ դնել ստեղծ էր :

Իր փոքրիկ բարեկամին համար էին ստոնք . այն խեղճ տղուն , որուն ազատարարն էր ինք . ձմեռ իրիկուն մը անոր ցնորման պահուն ու- նեցած երազին մարմնացումը ուզելովը :

Սիլվիա Բիէնը իր գրկացը մէջ կ'առնէր . զայն կը շոյէր և շոտ անգամներ Պ . և Տիկին Տամպրէօն իրենց ուրախութենէն կուլային :

Սիլվիա՛ իր գիրտս սուսուոյ սաչպ խնդ և երբեմն ախուր կեանքին և գիղցիկ աղջկնու- թեան մէջ ամենէն ալ կը պաշտուէր . և ամե- նուն ալ վէճին նիւթ կը մոտակարարէր . դե- ղեցիկութիւն մը՝ որ ընդ' սրբութեան խօսքին առարկան եղած և գովտասալից բացատրու- թեանց արժանացած էր :

Երկրիս վրայ , ք'չ մը բորիք ըրած ըլլա- լուն պատճառաւ , իր վրայ շիւսցողներուն ամե- նէն սրտաշարժ և անկեղծ զգացումը այն փոք- րիկինն էր , որ զինքը միայն անգամ մը բե- մին վրայ տեսած ըլլալով , կ'ուզէր իր հոգե- վարքի անկողնոյն մէջ , մեռնելէն առաջ ան- գամ մը ևս տեսնել . . . :

Թարգմ . ՕՆՆԻԿ

# Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԱԼԻՆԿԻՐ

Պատվաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն . Պրիսթլ Սթրէի ճիշդ դիմաց ,  
Կաթէ Տը Լա Պուրտի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկեր ներքն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ  
17,000,000 ծախուած է :

400 Է աւելի վիպակներով եւ մեքայներով վարձատրուած , Երաշխաստեայ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԵՐԻՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍՏ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեդծերէն զգուշանալ ,  
ուշագրութիւն դորձնել իւ-  
րաքանչիւր մեքենայի վրայ  
Սինկերի յասկանչիւն :



Ձրի դասեր եւ նորագու-  
թիւններ , Սինկեր մեքենա-  
յից համար , յաճախորդաց  
տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից  
Եւ նորագութիւն ամեն կարգի  
Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ

ՏԻՒԿԻՆ ՍՈՑԻԱԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապսխը-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն  
փոխադրած է Շարա Ապսխը-Ազիզ , Ալի փաշա  
Շէրիֆի պարտիզին դիմաց , Անիէտ պէյ Ապ-  
աիւ-Բազզիէ 20 թիւ սեփականութեան մէջ :

Տեղին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձա-  
նութեամբ եւ յաջողակութեամբ արգէն ծանօթ  
ըլլալով գահիրէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ  
օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնա-  
րարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի  
դարմանում :

ՄԻ՝ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄ ԱՅՈՅՈՒՆ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ  
(ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վճի  
նիքէլ , կոթէն լարող սիրուն ժամացոյց-  
ներ որոց լաւ բանիլը երաշխաւ տեսլ է :  
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացոյցիւն  
120 ՂՐՇ է սկսեալ մինչեւ 2500 ՂՐՇ : Ինչ-  
պէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և ք-  
սիտէ ժամացոյցներ . պատի և քօնուլի բազ-  
մազան Բանտիլներ և ամեն ճաշակի յար-  
մար Գոհարեղէնք :

ձոխ հաւաքածոյ բուն Ամերիկեայի քօ-  
նօկրաքներու :

# ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՊՈՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՄԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-  
նէն աւելի շահաբաժիններ :

Ապահովագրեալներուն արգէն վճարած  
է կամ ինպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ  
480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ո՞ր  
և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ  
ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ո՞ր և է ըն-  
կերութենէ աւելի երաշխաւորութիւններ ,  
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-  
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ  
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԱՎԻՉՈՆ զլիաւոր գործա-  
կատար յԱղքատանգրիա

նուի նոր վարձակալին նախորդին հետ տա-  
րիներէ ի վեր գրուածին պէս : Սակայն  
ծառերուն պէտք եղած խնամքը չ'տարուե-  
լով՝ տարիներու չըջանին մէջ 1000ի չափ  
ծառ ոչնչացեր է : Առաջնորդարանը նա-  
խորդ վարձակալէն քեչիլն առած պահուն  
անփոյթ գտնուած է ստուգել թէ վար-  
ձակալը կանխաւ քեչիլն առած 4000 ար-  
մաւենին ամբողջութեամբ ետ կ'վերադար-  
ձընէ՞ թէ ոչ : Նոր վարձակալը կ'դիմէ  
Ազգ . Առաջնորդարան և ինքիւրը պարզե-  
լով կ'պահանջէ որ տարեկան վարձքէն գու-  
մար մը զեղջուի ի փոխարէն 1000 ծառի  
պակասին : Առաջնորդարանն ահանջ չի կա-  
խեր : Մարդն ալ պայմանագիր ի ձեռին  
կ'դիմէ դատարան , որ կ'դատապարտէ Ա-  
ռաջնորդարանը 620 ոսկիի հատուցման՝ իբր  
փաստ փոխարէն : Առաջնորդարանը կրկին  
սխալ մը կը գործէ պնդելով թէ այնչափ  
պակաս ծառ չկայ և թէ վարձակալին պա-  
հանջածը չափազանց է : Դատարանի կողմէ  
իհշմ մը կատարել կ'որոշուի :

Ըստ սովորութեան Գինիչ Յանձնախումբը  
մը քանապիչիով (նեղոսի վրայ ճամբորդե-  
լու յատուկ առաքատանաւ) կ'մեկնի : Յանձ-  
նախումբը տեղւոյն վրայ քննութիւն մը  
կատարելով Առաջնորդարանին աննպատ  
վճիռ կուտայ , որ սոյն քննութեան համար  
եղած ծախքը 200 ոսկի ևս վճարելու հար-  
կադրուած է : Եթէ Առաջնորդարանն իր  
պարտքը ժամանակին կատարած ըլլար , այս  
850 լիբայի փուճ կորստեան չէր ենթար-  
կուեր :

Գործին պատասխանատուութիւնը կը  
ծանրանայ անշուշտ տեղւոյն Գաղաք . Ժո-  
ղովոյ վրայ , որուն անգամք , ինչպէս կ'ե-  
րեւի , անփորձ և գործի անհմուտ մարդիկ  
են , որք յաճախ իրենց որոշումները կու-  
տան Պ . Դիւանապետին տուած տեղեկու-  
թեանց վրայ հիմնուելով : Դիւանապետն  
ալ , որ բաւական ճարպիկ մէկը կ'երևի ,  
միշտ իր կողմը կ'տաչէ : Վանեցի Կարապետ  
Գալստեան մը , կրթական և բարեսիրական  
գովելի զգացումներով տոգորուած , հազա-  
րաւոր ոսկիներ , ընդարձակ ապրանքներ  
կ'կաակէ տեղւոյն Հայ հասարակութեան ,  
և նոր սերունդը դանկ մը , թիզ մը հող  
չաւելցնելէն զատ , եղածներն ալ չի գե-  
տեր լաւ կերպով մատակարարել :

## ՀՐԷՑՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԿԻՐԱԿԻ 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1901

3154	5842	6838	5726	563	566
897	1153	1297	1353	2582	2907
2963	3584	4116	4264	5037	5053
5246	5666	6280	6291	6855	7196
7203	7369	7637	8286	8423	8778

## ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1901

6017	310	6026	1298	151	290
9560	3788	1276	5693	8242	2165
4112	1966	4120	4080	8477	2391
5637	119	1491	609	7275	1574
	15	6770	462		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ